

ՀԱՆԴԵՍ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ



ՄԵՅԱԼ տարւոյ շրջանի մէջ, «Revue des Deux Mondes» կոչուած հանդիսին խմբագիրն, Պ. Պրիւնըպիէր, Անմահից կաձառին մէջ ընդունուելուն առթիւ ըրած բանախօսութեամբ հարուած մ'ազնեց տալ յաւգրոքեան, հարուած մի՛ որ թերեւս բոլորս վին անպատճառ չէր՝ բայց խոր և սաստիկ, որ ուրիշ արդիւնք չունեցաւ, բայց միայն ցնցել հետաքրքիր երիտասարդութեան հիւանդ ջղերը, մասամբ ևս նոցա ըղիղը, և քան զայն աւելի՛ յուզել և սրել իրեն դեմ լրագրատպետաց գրիչը և լեզուն։ Բարեբախտաբար այդ յազիւ և յազեալ շրջանակէն դուրս մնացին Հանդէսը, — մինչ ինքն իսկ «Հանդիսագիրն» պատկառելի հանդիսի մի զլուսն էր և է. — վասնզի այն ամէն անտեղութիւնք, զորս նշանակեր էր ճառարան և որոց ենթակայ են օրաթերթը, բնաւ աւելիք չունին մեր Հանդէս կոչուած ուսումնաթերթից մէջ։ Այսպէս ուրեմն այդ տեսակ թերթից օգուտն և կարեւորութիւնն ո՛ր և է վիճէ դուրս է. հետևաբար հարկ է ուրախութեամբ ողջունել մեր մէջն այլ ո՛ր և է նորածաղց ուսումնաթերթի մի երևումը, որ — կ'ենթադրուի — կու գայ մեր ընթերցող հասարակութեան մի նոր պէտքը լեցնելու, որ թերեւ քան զինքն երիցագունից ու չէն վրիպած էր։

Մարդուս միտքն և մարմինն, իրենց անթիւ ծաղրերուն համեմատ, եթէ ներուի ինձ այսպէս բացատրել, անհամար պէտքեր ևս ունին. ապա ի՞նչ զարմանք, եթէ յետ երկար գոյութեան այլեւայլ ուսումնաթերթից, տարուէ տարի ուրիշ նորագոյնք՝ այլեւայլ ա-

նուանց ներքե՛ լոյս կը տեսնեն, մինչդեռ ընդհակառակն այլոց լոյսն երթալով կը նուազի և ի սպառ կ'անհետանայ... ամենայն ինչ կը հպատակի բնութեան օրինաց, ինչպէս կ'ըսէ քերթողն.

«Նըրիրեալ կամք ի մահ՝ մեք և մերքս ինչ ի միտօին՝»։

Այսպէս բնաւ պէտք չէ ցուցընել, ինչպէս կ'ընեն ոմանք ոչ միայն արհամարհանք, այլ և ցրտութիւն իսկ առ ո՛ր և է թերթ կամ հանդէս, որ գրական ասպարիզին վրայ կը բուսնի յանկարծ մի անծանօթ ծաղկի նման. ո՛ր գիտէ, այդ ծաղկին թերթերն զուցէ այնպիսի նորագիտ հիւթ մի բուսնողակեն իրենց մէջ, որ կարողանայ հասարակութեան հիւանդութեան մ'առաջն առնուլ կամ գարմանել առոր մէկ կարօտութիւնը. միայն թէ չի նմանի այն առօրեայ ծաղկանց, որոնք հազիւ բացուած կը թառամին... Սոյնպիսի զգացմամբք և ուրախութեամբ ընդունեցանք ներկայ տալու շրջանին հետ, անցելոյն մէջ լոյս տեսած, Հորիզոն անուամբ գրականաւ կան հանդէսը, որոյ վրայ գրուած է Գիտք առաջին... Բառական մտքի հորիզոնով սկսած, առանց յառաջաբանի, առանց ծրագրի, և առանց մի ո՛ր և է նպատակ կամ ուղղութիւն ցոյց տալու։ Յիշուի, զա մի լաւ բան է, խոստումը չպարտաւորել ինչզիչներ սկզբան՝ քանի որ Հրատարակիչն անգամ, ո՛րչափ և կարող և նարտար լինի, չէ կարող բոլորովին փաստաւ լինել իւր գործոյն յաջողութեան կամ տևողութեան վրայ. ասկայն, միւս կողման, ծանրութիւն մ'է այդ ընթերցո-

դաց և բաժանորդաց, որոնք միշտ տարակաւ սի մէջ պիտի լինին թէ արգեօք Ասաշին գիրքն պիտի ունենայ իւր շարունակութիւնը՝ թէ վերջինն է և կամ վերջընթերս... Ինչպէս որ ոչ սակաւ անգամ կը պատահի, — Արիշ արեւոկոյս մ'այլ. արգեօք այլ 246 էջերէ բազկացած տետրն կամ գրչոյկն աւրեւան է, վեցամսեայ թէ ամսօրեայ. այդ հարցին պատասխանն չկայ նշանակուած ոչ մի տեղ, ո՛չ առաջը, ո՛չ ետեւը և ո՛չ մէջը, լուսթիւն է ի սպառ Հրատարակչին կողմէ. ապա և ես յարգելով լուսթիւնը, այլ ես չեմ երկարեր խօսքս այդ հարցի մասին, միայն հին թագաւորի մի խօսքը՝ յարմարը ներով խնդրոյս՝ կ'ըսեմ իրեն. Եթէ տարեկան կամ վեցամսեայ է այդ թերթին հրատարակութեան շրջանն, սակաւ է. իսկ եթէ ամսօրեայ, շատ է¹...

Այդ գրքին ներքը մտնենք: — Տպագրութիւնն, թուղթն, գրերն առ հասարակ ընտրել և նաշակով են. առանձն լրիպակց չեն նկատուիր ընդհանրապէս, ընդհակառակն շատ մտադրութիւն և խնամք կը տեսնուի: Թաղածք կամ շատ երկայն են, մինչև առանձին գրչոյկ կազմելու չափ, ինչպէս են « Բաւազարն » (83 էջ, ճիշդ ամբողջ գրքին երրորդ մասն), « Բաֆֆիի կեանքից » (35 էջ), « Բօրչալուս » (19 էջ), « Գեղարուեստի փիլիսոփայութիւն » (36 էջ), « Աշխարհի վախճանը և վախճանից յետոյ » (16 էջ), և կամ չափազանց կարճ, ինչպէս են ընդհանրապէս բանաստեղծութիւնք, որք հազիւ կէս էջ կը գրաւեն, օրինակ իմն, « Մի հառաչանք » (հնգուտեան 18 տող), « Օր. N-ին » (ութոտեան 8 տող),

1. Թողուած արդէն տպագրուած էր, երբ հրատարակչին քարտի մը իմացանք թէ վեցամսեայ է Հորիզոնին հրատարակութիւնն: Խ. Խ.

2. Զգիտեմ ինչ կը նշանակէ լատին տառերու գործածութիւնն հայերենի մէջ, իբր թէ կը պակսին առ առ մեզ զոգոս համապատասխանող տառք. ինչպէս նաև կարգահամարք գլխոց բոլոր լատինական թուրով են I, II, ևն. այդ անհիմն զեզոմն է և ոչ այլ ինչ, մինչ առ մեզ կը գործածուին Ա, Բ, Գ. ևն.

« Հրեշտակ », « Թափառի՛ր », ևն, բոսն սողէ նուազ են: Թողուածոց մէջ այնպիսի զանազանութիւն կայ նիւթոց, որ ընթերցողաց տաղուտ չըրերէն զատ՝ հաճոյք ևս կը պատճառէ և հետաքրքրութիւն կը շարժէ: Փիլիսոփայութիւն և բանաստեղծութիւն, վէպք և նկարագիրք անձանց և տեղեաց, « Հառաչանք » և « Օրհնութիւնք » այնպէս հիւսուած են, որ գեղեցիկ բարեխառնութիւն մի կը կազմեն: « Հրեշտակ » և « Մուսան » օրհասական, « Լերանց հովիւն » և « Փաշերի կեանքն », տիտայն և ուրախ, լուրջ և թեթեւ, որոնք ըստ ինքեան իրարու հակապատկերք կ'երևին և ներհակ զգացումներ կը ծնուցանեն ի սիրտս ընթերցողաց, այս տեղ, Հորիզոնին մէջ, այնպէս ներդաշնակուած են իրերաց հետ, ինչպէս խմբերգի մի մէջ զիլ և հաստ ձայներն: Տէնի « Գեղարուեստի փիլիսոփայութիւնն » խոր և ընդարձակ իմացականութեան մի հրաշալկերտն է. ո՛րչափ օգտակար պիտի լինի նորա ընթերցումն ժամանակին գրագիտաց, որոնք ոչ միայն հեռի են արուեստից կամ գիտութեանց մէջ փիլիսոփայութիւն փնտռելն, այլ և նոյն իսկ փիլիսոփայութեան ուսման կարևորութիւն չի տալով, լոկ որսի կամ զգացմանց թելադրութեան կը հետևին. և ահա անօգուտ վէպք, աննշան բանաստեղծութիւնք, թեթեւ յուսածիկը լոյս կը տեսնին անոնց գրչէն: Իսկ « Աշխարհի վախճանը և վախճանից յետոյ » գրութիւնն, — որ Յիշմարիտի ջերմ երևակայութեան և եսթադրութեանց արդիւնք է, քան թէ ստոյգ հիման և օրինաց վրայ հաստատուած գիտութեան մի ծանօթութիւնք, — մարդոս իրական կամ մտաւորական կենաց ոչ մի օգուտ չընծայեր ըստ ինքեան, այլ լոկ կը զբօսուցանէ միաբը առասպելայօզ զրոյցներու նման. այս սարքերութեամբ միայն, որ մինչ յետինք անցեալ իրերը իրենց նիւթ կ'առնուն, Յիշմարիտն՝ ապագայ լինելիքները: Սոյն գրութեան մէջ զարնէալ հեղինակն այնպիսի վարդապետութիւններ և զարափարներ կ'որոտայայտէ, որոնք ստոյգ չեն և ոչ ընդունելիք ողջամիտ գիտնոց: « Գրական շարժումն » այլ կը գրաւէ իւր տեղը Հորիզոնին մէջ:

գունին մէջ, նկատուած Գաղղիոյ և Ռուսիոյ մէջ. առաջինն ուրչափ որ ծանօթ է մեզ, նոյնչափ ևս մթին երկրորդն, հետեալաբար աւելի հետազոտողական է մեզ և փափաքելի որ յաղորդ թուեալուն մէջ ընդարձակագոյն տեղեկութիւնք լինէին նորա մասին: « Յաւազարն » իբրու ինքնագիր վեպ կամ ընտանեկան կենաց պատկեր մի, որ և զբնի առաջին և մեծագոյն տեղին գրուել է, յաւտուի քննադատութեան նիւթ կը մատակարարէ և իւր ամբողջութեան մէջ կրնայ կատարեալ գրութիւն մի համարուիլ: Սկզբան տաղտուկ պատմութեան չափ անշնան կերպով կը սկսի պատմութիւնն. բայց ահա « գիծ Դանիելի » անձնատրուութիւնն, որ գրեթէ նման պարագայից մէջ — Octave Feuillet ի Սիբիլի Պատմութեան (Histoire de Sibylle) մէջ եղած Ֆրեյլիի բորոտը կը յիշեցնէ, կը կտարէ այդ միտքնակութիւնը: Վէպին մէջ առ հասարակ տիրութեան զգացումն է որ կը տիրէ, ընթերցողին սիրտը կը ճնշէ, որ կարծես եղբարական կատարածին նախազգացումը կ'ունենայ յառաջագոյն: Գիւրնազ, Չառնիշան և պարսկունի կախարարն, որոնք սե և կենդանի գոյտով նկարուած են, ատրուութեան և նախանձու երբեմն ոգին կը կազմեն, ինչպէս որ ընդհակառակն հէք Սոնայի մայրն, Մուրադն և « գիծ Դանիելի » բարութեան և վեհանձն ոգոյ երրորդութիւն մի կը ներկայացնեն: Պատմութեան վերջն սատիկ խոր տպաւորութիւն կ'ընէ ընթերցողին վրայ. և, եթէ պարսկունին իրեն հատուցումը կամ պատիժը չունենար, վէպն թերի պիտի ըլլար և զուրկ բարոյական ուժէն. մինչդեռ « գիծ Դանիելի » հարուածն — թէ և տարօրինակ երազ կերպով տեղի կուրենայ — արդարութեան հարուածն է, որ կը յաղթանակէ և վերջ կու տայ պատմութեան:

« Տենչայր Սաթիւիկ — ի » մեկնութիւնն, որ բոլոր նախորդ մեկնելաց և թարգմանաց կարծիքները հերքելով, Պատկանեանի և մահաւանդ Գ. Խալաթեանի կարծեաց կը հակի և արձագանգ կու տայ, ժողովրդական անխախտ պահուած սովորութեանց վրայ հիմնուած, կը պահանջէ որ աւելի երկարօրէն

խօսէինք վրան. ժամանակն չի ներելով՝ ուրիշ առթի կը ձգենք զայն:

Զգիտեմ թէ « Չայլ Հարօլի երգն » անգղիերէն բնագրէն թարգմանուած է, թէ զաղղ. կամ ռուս թարգմանութենէ. բաւական հարազատ է և աղող ըստ ինքեան, ի բաց առեալ մի քանի տուներ, ինչպէս են, Առաջինն, յորում բոքը կը թարգմանէ բնագրին « the night-winds » (գիշերային հովք) բառերը, և մի սող առանց թարգմանելու անցեր է, որ արեւուն մեռածը ինչելով կ'ըսէ. « We follow in his flight » (կը հետեւինք իւր փախստեան). — Զորորդն, որոյ մի քանի բառեր և բացատրութիւնք կը պակսին. — Հինգերորդն, որու առաջին տողը « My father blessed me fervently » (Հայրս օրհնեց զիս եռանդեամբ՝ շնորհագին), թարգմանին կը գնէ Հայրս օրհնեց գաղիս ինձի (ինձի հեծի՛ն յանդ կազմելու համար դրուած է անշուշտ). — վեցերորդ տան մէջ անգղիերէն absent բառը հարազատ թարգմանուել է փոխանակ բացակայ ըսելու. — Եօթներորդ և ութներորդ տանց մէջ հոնք խոսքեր և թարգմանին զրէն հեղինակին մի քանի բառերը և բացատրութիւնները, և բարբախտաբար ամենէն աւելի մթին և զժուարիները: Սակայն պէտք է խոստովանիլ, թէ բնագիրն՝ իրեն զեղեցկութեան համեմատ՝ նոյնչափ այլ խրթին և անթարգմանելի է, ևս աւելի այն կարճ չափով զոր ընտրել և թարգմանին, և այն ընդհանրօրէն յանգերով (նոյն երգին մէջ 10—12 անգամ յանդ կը կազմէ բային ռա՛մ վերջաւորութիւնն), որովք կաշկանդուել է քանաաւանդին յանգուն թոյնն:

« Փաշերի կենսից » գրութիւնն, յորում տեղեր և անձանց նկարագիրը մեծագոյն մասը կը զրաւեն, ժողովրդական գիւցտգնբու և խաղուց պատկերն է. սովորական և ծանօթ նիւթ մի, որ բաւական զեղեցիկ կերպով արտայայտուած է: « Լեռների հովիւն » զգայուն գրութիւն մի, որ պարոջական մի շարապրութեան երեկոյթն ունի, և որոյ միակ թերութիւնն է թերեւ, ըստ իս, զիւնդ համեմատական չըլլալն մարմնոյն: « Քերթուածք » մասամբ ինքնագիրք են և

մասամբ թարգմանութիւնք. ոմանց մէջ Պաու-
նասեան օղոյն ներշնչումն զգալի կ'ըլլայ,
մինչ այլք՝ առանց անոր (invita Minervâ)
բանագրութիւն դրութիւնք են:

Լեզուին զալով, ընդհանրապէս ինքնազիր
յօդուածոց մէջ զուտ և յստակ հայերէն կը
տեսնուի, մերթ ընտանեկան բացատրու-
թեամբք և զուտաբարբառով ևս խոսն, ինչ-
պէս է « Յաւագոր » և « Քաշերի կեան-
քից » հատուածոց խօսակցութեանց մէջ:
Նոյն իսկ թարգմանութեանց մասին, համե-
մատելով ուրիշ առաւել լրագրաց և թեր-
թերու հետ, կրնայ Հորիզոնն գերազատ հա-
մարուիլ, որու մէջ աւելի ջանք և մտադրու-
թիւն կը տեսնուի օտար ուսումնական բա-
ռերը հայերէնի փոխելու: Ինչպէս օրինակ
իմն, Տէնի յօդուածին մէջ, որոյ թարգմա-
նիչն լաւ յաղողած է, կը զաննեք հետեւեալ
հայերէն բառերը, որոնք բաւական ընտիրք
են. Երփնագլուորիւն (le coloris), օդա-
խառնութիւն (température), վարդապետու-
կան (dogmatique), արտաճգութիւն (éma-
nation—լաւագոյն էր բռնել, բոխումն, ժա-
գումն, արտահոսումն, և այլն), հանգրեմ
(le raccourci), արմակաբ (la fresque),
անդամահերձութիւն (dissection), և այլն.
քիչ անգամ կը պատահինք եւրեւսիկա, մե-
րօք, անալոգիա, և ռոյնպիսի բառերու: Ֆլա-
մարիոնի գրութեան թարգմանիչն, թէ և
ինքն այլ կրցեր է բաւական գծուարութիւն-
ներ հարթել, զօրծածելով արդէն ընդունելի
եղած բառեր և կամ ինքնին ստեղծելով,
ինչպէս քրօսածին (oxygène), ածխաքրօ-
ս (acide carbonique), փետուկի (platine—
ունուկի տպագրուած վրիպակաւ —, յուս-

սագունգ (photosphère), պարոսնակ (or-
bite), բորակածիւն, և այլն, սակայն ստու-
րին է քան նախորդն. և ահա փոքրիկ ար-
գենեւու գիմաց կը շուարի և ուրիշ ելք չի
զաներ, բայց միայն տառադարձութեան պի-
մել՝ նոյն պահելով զազդիւրեւն բառերը.
ինչպէս օրինակ իմն, Էնկրգիա (ազդեցութիւն,
ներգործութիւն), պրոցես (ոճ՝ եղանակ դոր-
ծելու, գործ), ֆակտ (իր, եղելութիւն), և
այլն, և առ հասարակ մոլորակաց անուննե-
րը, յորոց ոմանց հայերէն բառերն մեր
նախնեաց մէջ իսկ կը զանուին. Վեներայ
(Vénus, յոսաբեր, արոսանակ), Խայսոս
(Jupiter, յոսանբագ), Մերկուր (Mercure,
փայլածո), Մարս (Mars, հրատ), Սա-
տուրն (Saturne, երեւակ), Ուրան (Uranus,
յուս). Οὐρανός—երկին, երկնաբոյսի, երկնա-
սոր), Նեպտուն (Neptune, Պոսիդոն—մոլոր-
ակ), և այլն:

Այսպիսի ինչ բաւական համարելով այս
անպամուն համար, խօսքս ընդհանրացնելով՝
ուրախակից կը լինիմ հրատարակչին, որ իւր
Հորիզոնովն օգտակար հանդէս մ'այլ աւել-
ցուց մեր լրագրաց և ուսումնաթերթից թուոյն
վրայ, որ առանց խօսից — իրօք կամ զործով —
կը խոստանայ կատարել զրական ասպարիզին
վրայ այնպիսի դեր մի, որուն պէտքը յիշուի
զգալի էր: Ապա կրնայ ընթերցասէր հա-
տարակութիւնն վստահութեամբ ստանալ զայն
և պիտի տեսնէ որ զոր պիտի մնայ նորա
բովանդակութենէն: Կը հրատարակուի թիֆ-
լիզ, Տպարան Յովնանեւ Մարտիրո-
սեանցի, գինն է 1 ռուբլի, Հրատարակչին
է ֆ. Վարդագարեանց:

Հ. Թ. Վ. Թ.